



ՆԱԴԱՅ ՀՈՎՆԱԹԱՆ

ԳՈՎԱՍՍԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԱՅ ՔԱՂԱՔԻՆ*

Կամիք գովել՝ դուք՝ Երևան...
Հաւեն վնաս որպէս ըզհուր,
Ջերմ և կանանչ աղտեղի՝ ջուր,
Գորտի ք.. է և փիս փրփուր,
Որպէս ծառի ժանգ և թրթուր:

Առաստոտոց կերթաս բազար,
Բոյ կու ծախեն քողկ ու գազար,
Թթու մածուն, չանախ-հազար,
Խմոր հացն կուտայ նազար:

Սափոր ու կուծ՝ ամենն ծակ,
Քանի ջուր կածես՝ թէ դարտակ,
Ոչ աղբիւր կայ և ոչ վտակ:

Բարուն չուխեն պօրկչոց շալակ,
Գտակ կարեն, ձգեն թալակ,
Ծալրն երկայն, որպէս սալակ,
Մէջն պատի հաստ քօշալակ:

Թէ մէլտանն անես օրօն,
Ծատ կայ տոխալ շրպեղ, տօրօն,
Երեւի, գդալ՝ խիստ խտօրօն,
Ամէնն ածես մէկ վառ թօրօն:

Չունի մէկ գովելոյ պատճառ,
Բազաստանն փնթի, մոռտաւ,
Կու ծախեն խիստ խաշար, սատաւ,
Թօրփա, քէչա՝ աթառ-փաթառ:

Հաւուզի փող տաս մէկ բունն,
Հարկիզ մէկն չառնիլ ձեռն,
Աչքն կոխես շամփորի կեռն,
Խմեցնես էշի ...ն:

Կուգեն ելենն ամենն քօշ,
Լի է մոծակ, մծիկ, քոշ,
Ալիշվերիշն է խիստ փօշ,
Տալոյ՝ նամարո, առնելոյ՝ դօշ:

Նաղաշն Երևան շատ կացաւ,
Ջիկարն այրեց, հիւանդացաւ,
Սպիտակ սառուցին զարմացաւ,
Խմեց՝ սրտիկն հովացաւ:

* Նաղաշ Հովնաթան, Բանաստեղծություններ, Երևան, 1951, էջ 99—100: